

«17» մայիս 2017թ.

No 25 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՏՇԱՃ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Դեղերի մասին» օրենքի
14-րդ հոդվածի առաջին մասը՝

Հրամայում եմ

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում կլինիկական փորձարկումներն իրականացվում են Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի ապրիլի 4-ի N 2001/20/EC և Եվրոպական հանձնաժողովի 2005 թվականի ապրիլի 8-ի N 2005/28/EC դիրեկտիվների համաձայն հաստատված «Պատշաճ կլինիկական գործունեության ուղեցույցի» կամ դեղերի գրանցման տեխնիկական պահանջների ներդաշնակեցման միջազգային համաժողովի կողմից ընդունված «Պատշաճ կլինիկական գործունեության ուղեցույցների» կամ Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի Խորհրդի 2016թ. նոյեմբերի 3-ի N79 որոշմամբ հաստատված «Եվրասիական տնտեսական միության պատշաճ կլինիկական գործունեության կանոններին» համաձայն:

2. Սույն հրամանը ուժի մեջ մտնելու հաջորդ օրը «Պատշաճ կլինիկական գործունեության ուղեցույցները» և «Եվրասիական տնտեսական միության պատշաճ կլինիկական գործունեության կանոնները» տեղադրել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում (www.moh.am):